



Եվրասիա համագործակցություն հիմնադրամ (ԵՀՀ)

մարդու իրավունքների ոլորտում քաղաքականության մշակման, արդարադատության ոլորտում մասնագիտական փորձառության, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության և Արդարադատության նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցության հակիրճ նկարագիր

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) տեսլականն է նպաստել նրան, որ Հարավային Կովկասը կայանա որպես խաղաղ, հակամարտություններից զերծ և համագործակցող տարածաշրջան, և աչքի ընկնի քաղաքացիների ներգրավման բարձր մակարդակով, սոցիալապես պատասխանատու ձեռներեցությամբ ու կայուն, պատասխանատու և արդյունավետ հասարակությամբ: ԵՀՀ առաքելությունն է հզորացնել մարդկանց՝ սոցիալական արդարության և տնտեսության ասպարեզներում էական փոփոխությունների հասնելու նպատակով, և իրականացնել կոնկրետ ծրագրեր, որոնք կօգնեն մարդկանց բարելավել իրենց համայնքը և կյանքը: ԵՀՀ-ն անկախ տեղական հիմնադրամ է դարձել 2007 թվականին: Այն Եվրասիա հիմնադրամի ժառանգորդ կազմակերպությունն է և ծրագրային, կազմակերպական և ֆինանսական առումներով գործում է որպես անկախ տեղական հիմնադրամ: ԵՀՀ-ն իր գործունեության շուրջ քսան տարիների ընթացքում կուտակել է ծրագրերի արդյունավետ իրականացման, դրամաշնորհային ծրագրերի կառավարման և Հայաստանի քաղաքացիական հասարակության հետ համագործակցության զգալի փորձ:

ԵՀՀ-ն ձևավորել է գործունեության յուրահատուկ փաթեթ, որը թույլ է տալիս կազմակերպությունը բնորոշել որպես «մտազործող» («think and do tank») կառույց, որը տարիներ շարունակ Հայաստանում իրականացնում է զարգացման երկարաժամկետ ծրագրեր: Մասնավորապես, ԵՀՀ մշակում և իրականացնում է ռազմավարություններ, միավորում է ցանցեր և կոնսորցիումներ, աշխատում է քաղաքացիական հասարակության կարողությունների հզորացման, քաղաքականության հետազոտությունների և շահերի պաշտպանության, այլընտրանքային բովանդակություն ստեղծելու և խաղաղարարական գործընթացների կազմակերպման ուղիներով, ինչպես նաև աջակցում է պետությանը **մարդու իրավունքների ոլորտում քաղաքականության մշակման** գործում:

Մարդու իրավունքների կտրվածքով 2012թ. -ից ի վեր ԵՀՀ-ն, Հայաստանում և Վրաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանության աջակցությամբ, իրականացրել է

կրոնական հանդուրժողականության և խտրականության դեմ պայքարի շարունակական ծրագրեր՝ նպատակ ունենալով բարելավվել տարբեր կրոնների նկատմամբ հանրային վերաբերմունքը, խթանել կրոնական հանդուրժողականության, խաղաղ համակեցության և բազմազանության վերաբերյալ հավասարակշռված և զգայուն լրագրողական լուսաբանումը, նպաստել խտրականության կանխարգելման և բացառման ոլորտում օրենսդրական դաշտի կարգավորմանը: 2014-ին ԵՀՀ-ն նախաձեռնեց [իրավագիտական հետազոտություն](#), որի նպատակն էր պարզել, թե արդյո՞ք Հայաստանի իրավական համակարգում պահանջվում է ընդունել «խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենք՝ որպես արդյունավետ իրավական պաշտպանության միջոց այն անձանց համար, ովքեր ենթադրաբար տուժել են խտրականությունից: Ուսումնասիրության արդյունքներից ելնելով, ԵՀՀ-ն ՀՀ արդարադատության նախարարության հետ միասին կազմավորեց ոլորտի փորձագետներից բաղկացած աշխատանքային խումբ՝ որի կողմից մշակվեց և 2016թ.-ին ներկայացվեց «Հավասարության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նշվածին հաջորդեցին Նախագծի քննարկումները ոլորտային հասարակական կազմակերպությունների, միջազգային կառույցների ու դեսպանատների, այդ թվում՝ ԵՄ-ի ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի, Հայաստանում և Վրաստանում Սիդերլանդների թագավորության դեսպանատան, ԱՄՆ դեսպանատան հետ, ինչի արդյունքում Նախագիծը լրամշակվեց և 2016թ.-ի մայիսին ներկայացրեց ՀՀ արդարադատության նախարարությանը: Նախարարությունը մշակել և ս. թ. փետրվարի 23-ին հանրային քննարկման է ներկայացրել [«Իրավահավասարության սպահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը](#), որի հիմքում, դրվել է ԵՀՀ-ի կողմից ներկայացված նախագիծը: Նախարարության կողմից մշակված Նախագիծը սակայն ունի որոշ խնդրահարույց կարգավորումներ, որոնք չեն բխում ԵՀՀ կողմից ներկայացված Նախագծի տրամաբանությունից և վերանայման կարիք ունեն: ԵՀՀ-ն նաև ծրագրեր է իրականացնում ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների հետ աշխատանքներում քաղաքացիական հասարակության կարողությունների շարունակական զարգացման ուղղությամբ, որի բաղկացուցիչ մասն է ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների այլընտրանքային զեկույցների մշակումը: Այսպես, 2018թ. փետրվար ամսից ԵՀՀ-ն ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող [«GSP+-ի միջոցով մարդու և աշխատանքային իրավունքների խթանումը»](#) համաշխարհային ծրագրի շրջանակներում իրականացնում է [«GPS+-ի միջոցով մարդու և աշխատանքային իրավունքների խթանումը Հայաստանում»](#) ծրագիրը, որի նպատակն է հզորացնել Հայաստանի մարզային ՔՀԿ-ների կարողությունները՝ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին, ինչպես նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին հասցեագրված որակյալ, հիմնավորված այլընտրանքային զեկույցների մշակման հարցում: Նախատեսվում է, որ ծրագրի շրջանակներում 2019թ.-ի ընթացքում նախապատրաստվելու և ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, ինչպես նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե են ներկայացվելու մարզային ՔՀԿ-ների կողմից մշակված առնվազն չորս այլընտրանքային զեկույց, որտեղ, կախված անհրաժեշտ և բավարար տվյալների առկայությունից, անդրադարձ կկատարվի նաև [իրավապահ մարմինների գործունեությանը](#), հատկապես ազգային/էթնիկ/կրոնական փոքրամասնությանը պատկանող երեխաների իրավունքների պաշտպանության կտրվածքով:

Թեև մարդու իրավունքների ոլորտում ԵՀՀ գործունեության հիմնական ուղղություններն են խտրականության կանխարգելումն ու կրոնական հանդուրժողականության խրախուսումը, ԵՀՀ ներգրավվածությունը մարդու իրավունքների քաղաքականության մշակման ոլորտում բազմաբովանդակ է և ուղղակիորեն առնչվում է **ՀՀ Արդարադատության նախարարության** գործունեության հետ: Այսպես, ԵՀՀ-ն ակտիվ ներգրավված է եղել ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախաձեռնած Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության դրույթներից բխող 2017-2019թթ. գործողությունների նոր ծրագրի մշակման աշխատանքներին: ԵՀՀ-ն Նախարարության ուշադրությանն է ներկայացրել մտքի, խղճի, կրոնի և դավանանքի ազատության իրավունքի, խտրականության դեմ պայքարի, երեխայի իրավունքների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ոլորտի բերավալման առաջարկների փաթեթներ: Ավելին, ԵՀՀ-ն մասնակցում է նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՀՀ արդարադատության նախարարության Անչափահասների արդարադատության խորհրդի աշխատանքներին՝ փորձագիտական ներդրում ունենալով երեխայի իրավունքների կատարելագործման ոլորտում: ԵՀՀ-ն ընդգրկված է նաև ՀՀ կառավարության Կայուն զարգացման նպատակների ազգայնացման ուղղությամբ կազմավորված միջգերատեսչական հանձնաժողովում՝ սոցիալական, իրավական և ժողովրդավարական հավասարության ուղղություններով, ինչն, ի թիվս այլոց, ենթադրում է պետական մարմինների և քաղաքացիական հասարակության հետ համատեղ արդարադատության համակարգին ուղղված քաղաքականության մշակում: Բացի այդ, ԵՀՀ մարդու իրավունքների ծրագրի տնօրենը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից հավաստագրված դասընթացավար է, ինչը հնարավորություն է տալիս վերջինիս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հետ համատեղ ԵԱՀԿ անդամ պետությունների իրավապահ մարմինների համար մշակել և իրականացնել ատելության խոսքի վերաբերյալ տեղայնացված դասընթացներ: Ավելին, սկսած 2018թ. հուլիս ամսից ԵՀՀ-ն՝ Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ, իրականացրել է «Դեպի «Հավասարության մասին» օրենքի ընդունումն ու արդյունավետ իրականացումը» ծրագիրը, որի նպատակն է աջակցել խտրականության դեմ պայքարի օրինագծի ընդունմանը՝ ամրապնդելով ոլորտային դերակատարների միջև համագործակցությունն ու իրականացնելով խտրականության և օրենքի նախագծի վերաբերյալ պետական, այդ թվում՝ իրավապահ մարմինների ներկայացուցիչների ու ՋԼՄ-ների համար իրազեկման բարձրացում՝ ոլորտում բարձր որակավորում ունեցող փորձագետների ուղղորդմամբ: